«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նախապրբենական փուլի կազմակերպման նպատակները և իրականացմանուղիները

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝Գոհար Դարբինյան

Ուսումնական հաստատություն՝ « ՀՀ Արարատի մարզի Միփանիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն

1.Գրաճանաչության կազմակերպման գործընթացին ներկայացվող մանկավարժական պահանջները

2.Գրաճանաչության նախապայբբենական շրջանի կրթադաստիարակչական խնդիրները 2.1.Կազմակերպչական խնդիրներ

2.2.Ուսումնական խնդիրներ

3.Նախապայբբենական փուլի կազմակերպման նպատակները և իրականացման ուղիները

Եզրակացություն

Ներածություն

Հարց՝ Նախաայբբենական փուլում ինչպե՞ս են երեխաները գրաճանաչության նախապատրաստվում

Ուսուցման սկզբունքի համաձայն ուսուցման գործընթացի կենտրոնում՝ գլխավորդերում աշակերտն է, նրա շահերը, հակումներն ու հետաքրքրությունները, պահանջմունքների ըմբռնումը, ուսումնական գործընթացում նրա ակտիվ մասնակցության ապահովումը:

Այս ամենը հատկապես կարևոր է վեց տարեկանում համալրված առաջին դասարանում, քանզի այդ երեխաները դպրոց մտնելով հայտնվում են նոր հասարակական միջավայրում՝ իրենց համար գրեթե անծանոթ, նոր սոցիալական պայմաններում:

Առաջին դասարանցիների համար չափազանց դժվար է հաղթահարել մինչ այդ իրենցանծանոթ գործունեության ձևի խոչընդհոտները, անծանոթ հարաբերությունները և դրանցից բխող բարդությունները, նոր աշակերտի կարգավիճակը:

Իմ աշխատանքային պրակտիկայի և նպատակային ուսումնասիրությունների ընթացքում ականատեսն ու մասնակիցն եմ եղել վեց տարեկան երեխաների ուսումնական գործընթացում, մասնավորապես՝ նրա սկզբում աշակերտ դրաձած դժվարությունների մեջ ամենածանրը ուսումնական ծրագրային խնդիրների լուծման իմաստով գրաճանաչության կազմակերպման շրջանն է, որի ընթացքում աշակերտները պիտի հաղթահարեն հոգեբանական, կազմակերպական և ուսումնական խոչընդոտներ:

Ինչպե՞ս հաղթահարել այդ խոչընդոտները, որպեսզի չխաթարվի նրա առողջությունը, չմարեն նրա սովորելու ցանկությունն ու դրդապատճառները: Եվ վերջապես, ինչպե՞ս կազմակերպել երեխաների գրաճանաչությունը:

Գրաճանաչությունը բաժանվում է երեք փուլերի՝ նախաայբբենական, այբբենական և հետայբբենական:

Նախաայբբենական փուլի հիմնական խնդիրներն են՝ հեքիաթների միջոցով սովորողների ստեղծագործական, տրամաբանական-վերլուծական մտածողության և ուսումնական հմտությունների զարգացումը, բառապաշարի հարստացումը: Գրաճանաչության նախաայբբեական փուլի նպատակների հասնելու ուղիները վարժությունների և առաջադրանքների միջոցով երեխաների համապատասխան հմտությունների զարգացումն է:

Գրարճանաչության ուսուցման նախաայբբենական շրջան

1.Գրարճանաչության կազմակերպման գործընթացային ներկայացվող մանկավարժական պահանջները

Գրաճանաչության կազմակերպման գործընթացի բովանդակությանն ու մեթոդներին ներկայացվում են սովորողների տարիքային առանձնահատկություններով և հնարավորություններով պայմանավորված որոշակի պահանջներ: Գրաճանաչության ուսուցումը կազմակերպելիս պիտի հաշվի առնել ուսուցման մատչելիության, զննականության, հաջորդականության, պարզից դեպի բարդը, ծանոթից անծանոթը գնալու և անհատականության սկզբունքները՝ դասի ժամանակ կարևոր դեր տալով ինչպես դիդակտիկական, այնպես էլ շարժուն խաղեր:

Գրաճանաչությունը սովորաբար կազմակերպվում է երեք շրջանով .

ա) նախաայբբենական շրջան

բ) այբբենական կամ գրուսուցման շրջան

գ) հետայբբենական շրջան:

Պայմանավորված յուրաքանչյուր երկրի կրթական համակարգի առանձնահատկություններով և հայեցի կրթության իրականացման շահեկան դիրքորոշումներով, ինչպես նաև ուսումնական գործունեությունն սկսելու տարիքով՝ գրաճանաչության նախաայբբենական շրջանին տրամադրվում է տարբեր ժամանակահատված, որի ժամանակ փուլ առ փուլ իրականացվում են վերը նշված խնդիրները:

2. Գրաճանաչության նախաայբբենական շրջանի կրթադաստիարակչական խնդիրները

Գրաճանաչության ցանկացած մեթոդով աշխատելիս, անկախ հայեցակարգային դիրքորոշումներից, գրեթե առանց բացառության առանձնացվում է հատուկ նախապատրաստական շրջան, որի ժամանակ լուծվում են ուսուցման այդ փուլի մանկավարժահոգեբանական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրամշակված գրաճանաչության շրջանի բովանդակությամբ և մեթոդներով,

նախադպրոցական տարիքի երեխաների տարիքային առանձնահատկություններով

կրթօջախի տեսակով և կրթության՝ այդ օղակի նպատակներով պայմանավորված որոշակի խնդիրներ:

Գրաճանաչության նախաայբբենական կամ նախապատրաստական շրջանի հիմնական խնդիրները կարելի է բաժանել երկու խմբի՝ կազմակերպական և ուսումնական:

2.1 Կազմակերպական խնդիրներն են.

ա) երեխաների ծանոթացում նրանց համար նոր ուսումնական գործունեությանը.

- ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ
- աշակերտների ծանոթացումը միմյանց հետ, մանկական կոլեկտիվի ստեղծում
- ծանոթություն երեխաների իրավունքներին և պարտականություններին
- աշակերտական նստարանին ճիշտ նստելու, խոսելու ցանկության դեպքում ձեռք բարձրացնելու և ձայն խնդրելու, խոսելիս կամպատասխանելիս անհրաժեշտության դեպքում կանգնելու ունակությունների մշակում
- ուսուցչին, ընկերներին և իրենց դիմած յուրաքանչյուրին բարձրաձայն, հստակ և ամբողջական խոսքով պատասխանելու կարողության ձևավորում, ուսուցչի խոսքը լսելու, հասկանալու նրա տված հանձնարարությունները, կատարելու ունակության զարգացում
- գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքի կանոնների յուրացում:

բ) Հարմարեցում ուսումանական գործունեությանը (ադապտացիա):

2.2 Ուսումնական խնդիրներ

Ուսումնական գործունեությանը երեխաների պատրասատակամության մակարդակի բացահայտում:

Երեխաների պատրաստվածության մակարդակի ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս ուսուցչին՝ գրաճանաչության գործընթացը մեթոդապես ճիշտ կազմակերպելու համար: Ծանոթությունն իրականացվում է նախապես մշակված

հարցերի շուրջ իրականացվող ակտիվ զրույցի, պարզ առաջադրանքների

կատարման ճանապարհով: Արդյունքներն ամփոփելու համար ուուցիչը պիտի պարզի յուրաքանչյուր աշակերտի՝

ա)խոսելու, բացատրվելու, հարցեր տալու, ընկերներին և ուսուցիչներին լսելու, հասկանալու, ուսուցչի հանձնարարությունները կատարելու, ընկերների և ուսուցչի հետ հաղորդակցվելու ունակությունների մակարդակը

բ)հնչյունային լսողության մակարդակն ու հայերենի հնչյունները ճիշտ արտասանելու կարողությունը:

- բառերն արտասանում է գրական հայերենի ճիշտ շեշտադրությամբ
- հնչյուններն արտասանում է որոշակի սխալներով (ունի լեզվական արատ)
- ունի խղճուկ, կցկտուր, ցածրաձայն խոսք
- ունի արտահայտիչ խոսք

գ) բանավոր կապակցված խոսք

- ունի իր տարիքին համապատասխան բառապաշար
- անգիր գիտի և արտահայտիչ արտասանում է փոքրիկ բանաստեղծություններ
- գիտի և կարողանում է վերարտադրել ունկնդրած պատմվածքները, հեքիաթները (ինքնուրույն կամ հարցերի օգնությամբ)
- ուսուցչի հարցերի օգությամբ կարող է առաջադրված պարզ բովանդակություն ունեցող նկարների շուրջ կազմել մեկ-երկու մտքով իրար հետ կապված նախադասություն
- ուսուցչի, տարեկիցների և ավագների հարցերին պատասխանում է ընդրաձակ (համառոտ) և ավարտուն նախադասություններով
- ուսուցչի կամ օտար մարդկանց ներկայությամբ կաշկանդված է, չի խոսում

դ) խոսքի շարահյուսական կառույցը

- կազմված է հաստակ կառուցվածք ունեցող շարահյուսորեն ավարտուն, պարզ նախադասություններով
- կազմված է միայն պարզ, ոչ ավարտուն նախադասություններով
- կապակցված խոսքում օգտագործած նախադասությունների միջև բացակայում են տրամաբանական, պատճառահետևանքային կապերը
- չունի ամբողջական նախադասություններ կառուցելու կարողություն
- նախադասությունները թողնում է անավարտ և անցնում է նոր մտքի
- նախադասությունները թողնում է անավարտ:

նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակները և իրականացման ուղիները:

3.Գրաճանաչություն

Նախաայբբնական փուլի կազմակերպման նպատակները և իրականացնացման ուղիները

Նախաայբբենական փուլի հիմնական խնդիրներն են՝ հեքիաթների միջոցով սովորողների ստեղծագործական, տրամաբանական-վերլուծական մտածողության և ուսումնական հմտությունների զարգացումը, բառապաշարի հարստացումը: Նախաայբբենական փուլի նպատակներին հասնելու ուղիները վարժությունների և առաջադրանքների միջոցով երեխաների համապատասխան հմտությունների զարգացումն է: Նմանատիպ առաջադրանքների օրինկաներով հարուստ է «Մայրենի» դասագիրքը, սակայն ես ևս կկազմեմ իրավիճակին և դասարանին ընդհանուր մակարդակին համապատասխան օրինակներ, որպեսզի լիակատար լինի նախագրային կրթության արդյունավետությունը:

Նախաայբբենական փուլի կազմակերպման բարդությունները պայմանավորված եներ երեխաների տարիքային առանձնահատկություններով: Կրտսեր դպրոցական տարիքը անհատի զարգացման կարևոր փուլ է, մանկության գագաթնակետը: Պահպանվում են շատ որակներ, բայց նա արդեն սկսում է կորցնել մանկան

անմիջականությունը, և առաջանում են մտածողության մեկ այլ որակ և տրամաբանություն: Ուսումը երեխայի համար նշանակալից գործունեություն է: Դպրոցում նա ձեռք է բերում ոչ միայն նոր գիտելիքներ ու կարողություններ, այլև որոշակի սոցիալական կարգավիճակ: Փոխվում են հետաքրքրաությունները, արժեքները:

«Մայրենի» առարկայի գլխավոր առանձնահատկությունը գործնական ուղղվածությունն է: Այս նպատակադրումը պահանջում է ներկայացնում ուսուցման բովանդակության մեջ առանձնահատուկ տեղ տալ բառի ուղղախոսական և ուղղագրական կանոնների ճիշտ կիրառմանը, բառիմաստի ընկալմանը, բառօգտագործմանը, բառերի ՝ իմաստային և քերականական կապակցելիությանը, բառերի փոխաբերական կիրառությանը, նախադասությունների կառուցման մեջ բառերի ու բառաձևերի դերին: Սա նպաստելու է ինչպես կապակցված խոսք կազմելու հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, այնպես էլ սովորողների ճանաչողական կարողությունների, աշխարհընկալման, տրամաբանական մտածողության զարգացմանը, իմացական դաշտի ընդլայմանը: Այս բոլոր առումներով հաջողության հասնելու համար ես հատուկ և նպատակաուղղված քայլեր եմ կատարել և մեթոդական մոտեցում ցուցաբերել ՝ սկսած նախաայբբենական փուլից:

Դասավանդման ընթացքում մեծ ուշադրություն եմ դարձրել դասի պլանավորմանը, որը ուղղորդող նշանակություն ունի: Դասավանդելիս հաճախակի կիրառել եմ համագործակցային մեթոդներ՝ չհրաժարվելով ավանդականից: Այդ մեթոդների նպատակային կիրառումն աշակերտների համար դասերը դարձնում է հետաքրքիր ևնպաստում են նյութի հեշտ յուրացմանը:

Նախաայբբենական փուլի հիմնական նպատակը երեխաներին գրաճանաչության նախապատրաստելն է: Այբբենարանում ներկայացված թեմատիկ նկարները,

նկար-պատմությունները, նախադասության և բառի ընդհանրացված գծապատկերները, բառի վարկային ու հնչյունային կազմի գծապատկերները խոսքի զարգացման, լեզվական վերլուծությունների ու համադրությունների, կարդալու կարողության ձևավորման հիմքերն են:

Նախաայբբենական բաժինը կառուցված է այնպես, որ երեխաների մեջ արթնացնիհետաքրքրասիրություն, սեր գրքի և դպրոցի նկատմամբ , սովորելու ցանկություն:Հաճույքով կատարելով դասագրքի բազմաբնույթ առաջադրանքները՝ երեխաներն ուժեղ են զգում իրենց, դառնում են զվարթ, շփվող և նրանց չի լքում հաջողակ լինելու զգացումը:

Նախագրքային բաժնի հիմնական նպատակը երեխաներին աստիճանաբար ուսումնական գործընթացի մեջ ներգրավելն է, աննկատ կերպով նրանց ավելի ու ավելի բարդ առաջադրանքների կատարմանը նախապատրաստելը, միաժամանակ, նրանց մտածողության զարգացումը, ստեղծագործական ունակությունների բացահայտումը, ճանաչողական հետաքրքրությունների խթանումը:

Նախաայբբենական փուլը կազմակերպելիս նպատակային առաջին գործողությունը երեխաների ուշադրության կենտրոնացմանը միտված վարժությունների կազմակերպումն է : Երեխաներին առաջադրում եմ նախ հեշտ վարժություններ, ապաաստիճանաբարավելի բարդ տարբերակներ:

Փորձս ցույց է տվել, որ հատկապես կրտսեր տարքի երեխաներին հետաքրքրում են բազմաբնույթ լեզվատրամաբանական ուսուցողական առաջադրանքները. Դրանց շնորհիվ նրանք առավել հեշտ են յուրացնում ուսուցանող նյութը և ավելի են կապվում գրքին:Այդ կերպ նրանք սովորում են սովորել և դրանից հաճույք ստանալ, սովորում են մտածել, ինքնուրույն վճիռներ կայացնել, գնահատել իրենց կատարածը, համեմատել ուրիշների հետ, մրցել: Զարգանում են նրանց ստեղծագործական երևակայությունը, հիշողությունը, մտածողությունը, նրանց մեջ ձևավորվում են երկարատև կենտրոնանալու, կամք դրսևորելուունակությունները:

Ներկայացնում եմ մի խումբ խաղեր որոնք լուծում են վերոհիշյալ խնդիրները:

- Գտի՛ր զույգը: Ուշադրության կենտրոնացմանն ուղղված ամենահեշտ վարժություններից է. երեխային առաջարկում եմ տարբեր պատկերներ, որոնցից նա պետք է գտնի չափով, ձևով, գույնով մնան պատկերներ:



- Գտի՛ր ավելորդը: Բնույթով նույնն է, ինչ նախորդը. Երեխան պետք է լարի ուշադրությունը և հասկանա , թե նկարում որ պատկերն է ավելորդ:

- Ո՞րը չես տեղադրիր: Առաջադրանքը նպաստում է ուշադրության և մտածողության զարգացմանը: Սովորողը պետք է նշի այն առարկան , որը չի կարող կամ չի կարելի տեղադրել պահարանի, սառնարանի մեջ:



- Նշի՛ր հաջորդը: Առաջադրանքը կատարելիս երեխան պետք է գտնի տրամաբանական որևէ օրինաչափության և ըստ այդ օրինաչափության մտածի, թե ո՛ր առարկայի պատկերը կլինի հաջորդը: Ըստ որում, յուրաքանչյուր առաջադրանքի դեպքում օրինաչափությունը փոխվաում է:



- Ո՞րն է ավելորդ: Նպաստում է ոչ միայն ուշադրության , այլև մտածողության զարգացմանը: Ըստ ինչ-որ հատկանիշի երեխան պետք է ընտրի որոշ առարկաների: Օրինակ՝ աշակերտին տրվում է զամբյուղ , և նա պետք է հասկանա , որ անհրաժեշտ է մրգեր, գրապահարանի դեպքում գրքեր և այլն: Այս փուլի հաջող անցկացումից հետո սահուն անցում եմ կատարում նախադասություն կազմելու, պատմություն հորինելու և պատմելու փուլին: Այս նպատակի իրականացման ուղիները ևս տրվում են տարբեր վարժությունների տեսքով՝ պարզից մինչև բարդ , օրինակ.

- Գտի՛ր պակասող դրվագը: Սովորողները պատմություն են հորինում թեմատիկ նկարի շուրջ: Նրանք որոշում են , թե որ դրվագներից է բաղկացած նկար-պատմությունը, և նշում են այդ դրվագը , որը պակասում է թեմատիկ նկարտում:



- Գտի՛ր տարբերությունը:Առաջադրանքն իրենից ներկայացնում է համադրելու և հակադրելու , այսինքն ՝ համեմատելու մտավոր գործողություն, ինչն արդյունավետ է կրտսեր դպրոցականի իմացականակտիվության խթանման և նրա ընդհանրացնող մտածողության զարգացման համար:Սովորողները պետք է նշեն , թե որ զույգի նկարներն են միմյանցից տարբերում:

- Ո՛ր դրվագն է առանձնացված : Սովորողները պատմություն են հորինում թեմատիկ նկարի շուրջ: Նրանք որոշում են, թե որ դրվագներից է բաղկացած նկար-պատմությունը, և նշում են այն դրվագը, որն առանձնացված է տրված նկար-պատմությունից: Այդպիսով՝ առաջադրանքը զարգացնում է երեխաների՝ նախադասությունները պատմությունից առանձնացնելու ունակությունները:



- Ո՞ր գծապատկերն է համապատասխանում: Պատմության գծապատկերը մեծ ուղղանկյուն է, որը բաժանված է մասերի: Նախադասության գծապատկերն ուղղանկյուն է , որի սկիզբը տրվում է մի փոքրիոծ գծով և բարձր (քանի որ նախադասությունը սկսում է մեծատառով), իսկ ուղղանկյան վերջում դրվում է երկու կետ (վերջակետ):

- Գտի՛ր ավելորդը: Տեսական-մեկնաբանական վարժություն է:Առաջադրանքի կատարման համար սովորողներն ուշադիր դիտում են նկար-նախադասությունները և նշում այն նկար-նախադասությունը, որը ավելորդ է , այսինքն՝ առանձնացված է այդ նկար-պատմությունից:
- Նկար-պատնություն և նկար-նախադասություն: Առաջադրանքի կատարումը կնպաստի, որ սովորողերը լիարժեք ընկալմեն նկար-պատմության և

նկար-նախադասության տարբերությունները և հասկանան, որ նկար-նախադասությունները նկար-պատմության մասին են: Հարկավոր է նշել այն նկարների զույգը , որի նկար-նախադասությունն առանձնացված է նկար-պատմությունից:

- Դասավորի՛ր ճիշտ հաջորդականությամբ: Սովորողը պետք է նշի այն շարքը , որտեղ նկարները դասավորված են տրամաբանական հաջորդականությամբ:

- Գտի՛ր սխալը: Տրված են արտասավոր ու անհեթեթ նկարներ:Այդ անհամապատասխանությունը նկատելու համար երեխայից պահանջվում են ճանաչողական գիտելիքներ և դիտունակություն: Նա պետք է նշի անհեթեթություն արտահայտող նկարը:

- Բառ-նկար: Տրամաբանական բնույթի վարժություն է: Նախադասությունը վերլուծելու և դրա բաղադրիչները դիտարկելու միջոցով աշակերտներին գաղափար է տրվում բառի մասին՝ որպես նախադասության բաղադրիչ մաս և որպես որևէ կոնկրետ իմաստ արտահայտող առանձին լեզվական միավոր: Ուշադիր դիտլուց հետո նշվում է այն նկար-բառը, որն առանձնացվել է նկար-պատմությունից:



- Միավանկ և բազմավանկ բառեր: Տեսական-մեկնաբանական բնույթի վարժություն է: Առաջադրանք ի կատարումը նպաստում է բառերը համապատասխան արտասանությամբ վանկերի բաժանելու կարողության ձևավորմանը:

- Դի՛ր գծապատկերի կողքին: Սովորողները հաշվում են տրված նկար-բառերի վանկերը: Ապա հաշվում են գծապատկերի մասերը և որոշում , թե որ նկար-բառին է համապատասխանում այդ գծապատկերը:



- Ո՞ր նկարի գծապատկերն է ճիշտ: Երեխաները նկար-բառերին են համապատասխանեցնում վանկերի և տարբեր քանակությամբ բառերի գծապատկերները: Առաջադրանքը նպաստում է սովորողների մոդելավորման կարողությունների զարգացմանը:

- Նշի՛ր ավելորդը: Առաջադրանքը կատարելու համար երեխաները պետք է անվանեն առարկայական նկարները, այդ բառերը բաժանեն վանկերի և նշեն այն միակ նկար-բառը , որն իր վանկերի քանակով տարբերվում է մյուսներից:



- Ո՞ր նկարներն են սկսվում նույն հնչյունով: Սովորողները նախ հնչյունային վերլուծության են ենթարկվում նկար-բառերը, ապա նշում միևնույն հնչյունով սկսվող նկար-բառերը:

- Նույն հնչյունով սկսվող և վերջացող բառեր: Առաջադրանքը նպաստում է հնչյունային լսողության զարգացմանը, միևնույն հնչյունը բառասկզբում , բառավերջում լսելու և օգտագործելու կարողությունների ձևավորմանը:

- Գտի՛ր «ավելորդը»: Սովորողները հաշվում են նկար-բառերի հնչյունների քանակը և նշում այն միակ նկար-բառը , որն իր հնչյունների քանակով տարբերվում է մյուսներից:

- Մեկ հնչյունով տարբերվող բառեր: Նկար-բառերը հնչյունային վերլուծության ենթարկելով՝ սովորողները նշում են այն նկար-բառերի զույգը, որոնք միմյանցից տարբերվում են մեկ հնչյունով:



- Գտի՛ր ձայնավոր ու բաղաձայնով սկսվող և վերջացող բառերը: Առաջադրանքը նպաստում է արտասանության միջոցով ձայնավոր և բաղաձայն հնչյունների տարբերակման կարողության ձևավորմանը:

- Նույն ձայնավորով և նույն բաղաձայնով սկսվող բառեր: Առաջադրանքը նպաստում է սովորողների ՝ արտասանության միջոցով ձայնավոր և բաղաձայն հնչյունները կարողության զարգացմանը:
  Նախագրային շրջանում երեխաները ծանոթանում են կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներին, կատարում զանազան համեմատություններ, գտնում առարկաների նմանություններն ու տարբերությունները, վարժվում են երկարատև և լարված աշխատել որևէ առաջադրանք կատարելիս: Սովորում են գտնել , թե որ առարկաներն են «ընկերներ», և որոնք ՝ «հակառակորդներ», վարժվում են մտնել և դուրս գալ բավիղներից . աշխատեցնելով հայացքը և մատիտը՝ առարկաների միջից գտնում են «ավելորդը», առարկաները դասակարգում ըստ որևէ հատկանիշի, նկարում առարկաների պակասող մասերը, գունավորում ու գծում, կատարելագործելով դաստակի ու մատների նրբաշարժումները: Նրանք վարժվում են խոսքից (պատմությունից) առանձնացնել նախադասություն, նախադասությունից՝ բառ, բառերը վանկատել և ենթարկել հնչյունային վերլուծության, իմանում են, թե ինչ է գծապատկերը, վանկային կորը, հնչյունը, ճանաչում են հնչյունները, տեղեկանում են նրանց վանկարար դերի մասին: Զարգանում են նրանց հնչյունաձայնային լսողությունը, բառից այս կամ այն հնչյունն առանձնացնելու կարողությունը, լսելու և խոսք կառուցելու , մտքերը շարադրելու հմտությունը:Երեխաները սովորում են անվանել նկարում պատկերված առարկաները , կազմել նախադասություններ ըստ նկարների, հորինել պատմություններ, «կարդալ» նկարաշարեր, նախադասություններն ու բառերը ներկայացնել գծապատկերներով:Այսպիսով, նախաայբբենական փուլի հիմնական խնդիրներն են՝ հեքիաթների միջոցով սովորողների ստեղծագործական երևակայական մտածողության ձևավորումը, բանավոր խոսքի զարգացումը, բառապաշարի հարստացումը և ուսումնական այլ հմտությունների՝ այդ թվում տրամաբանական-վերլուծական մտածողության զարգացումը:

Եզրակացություն

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գրելու գործընթացը, անշուշտ, որպես մտավոր գործնեություն, շատ ավելի բարդ աշխատանք է, քան կարդալը: Գրավոր խոսքի հմտություններն սկսում են կազմավորվել դեռևս գրաճանաչության նախապրբենական շրջանում և հետագա ուսումնառության ամբողջ ընթացքում շարունակվում են հղկվել ու կատարաելագործվել: Այդ աշխատար գործընթացը երեխաներից պահանջում է մտավոր, ֆիզիկական ունակություններ, հատուկ ճիգերի գործադրում, գրելու տեխնիկական հմտություններ, հուզական կայունություն, կամքի մղում, գիտելիքի նյութական բովանդակության մտապահում, հնչյուններին համապատասխանող տառերի ձևերի պատկերացում, տվյալ տառերը գծող կամ ձևավորող գրամոտորային շարժումների պատկերացում:

Հանգեցի այն եզրակացության, որ ինչպես էլ աշխատի ուսուցիչը, ինչպիսի հնար էլ որ նա օգտագործի, կլինեն փոքրիկներ, որոնց համար այս գործունեությունները լուրջ բարդություն կներկայացնեն: Այդպիսի երեխաներին օգնելու համար պիտի կարևորել ոչ թե երեխային հանձնարարվող յուրաքանչյուր գործողության կրկնությունը, այլ ուսուցչի անհատական աշխատանքն առանձին աշակերտի հետ:

Գրականություն

Ջուլիետա Գյուլամիրյան

«Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա»Վ.

Սարգսյան «Այբբենարան»

Վ. Սարգսյան «Այբբենարան» ուսուցչի ձեռնարկ

Նախաշավիղ